



Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊՐՈՖ.-ԴՌԿՏ. Ա. Գ. ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

ՏԱՐԵԹՎԵՐԻ ԵՎ ԱՄՍԱԹՎԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ*

Գ. ՀՈՒՄԵՆԱԿԱՆ ԹՎԱԿԱՆԸ

Հայ մատենագրության մեջ, ճիշտ է շատ քիչ, գործ է ածվել նաև հոռոմեական թվականը։ Այս թվականը հոռոմեական է կոչվում այն պատճառով, որ նրա սկզբնավորությունը, ըստ ավանդության, կապվում է Հռոմ քաղաքի հիմնադրության հետ։ Վարրոնի հաշվումներով, Հռոմ քաղաքը հիմնադրվել է 753 թվին մեր էրայից առաջ, մեր թվարկության 247 թվին (Փիլիպոս կայսեր 4-րդ տարին) բոլորվել նրա հազարամյակը և 248 թվին նոր հազարամյակի սկիզբը դրվել։ Հայկական որոշ հիշակարաններում այս թվականը կոչվում է նաև հունական, անշուշտ, հոռոմեականի իմաստով։

Հոռոմեական մեծ թվականը ներկա թվականի վեր ածելու համար պիտի ավելացնել 248։ Հոռոմեական մեծ թվականը հայկական թվականի վեր ածելու համար, պիտի ավելացնել 304։ Հովհաննես Իմաստասերի «Պատճէն տոմարի Հայոց»-ում հոռոմեական մեծ թվականը գտնելու համար հանձնարարվում է հետևյալ հաշվումը կատարել. «Հոռոմոց թուականն այսպէս արաւ. կալ զՀայոց մեծ թուականն, 3Դ (304) ի վերայ բեր՝ մեծ թուականն է Հոռոմին»⁵⁸։

Բերենք այս թվականի օդադործման մի քանի փաստեր։

Ստեփանոս Ասողիկն իր Պատմությունն ավարտել է արարչության 3ԽԶԲ-ին, խաչելու-

թյան՝ 22Բ-ին, «իսկ ըստ Յոնաց թուականին ի Փիլիպպոս կայսրէ՝ ամբ 2ԾԷ, և ըստ հայերէն չափս մերոյ՝ ամբ ՆԾԳ»⁵⁹։ Արարչության տրված թվականը ներկա թվականի վեր ածելու համար, մենք պիտի առաջնորդվենք Մովսէս Սյունեցու թվահաշվով — հանենք 5277 (6282—5277), կստանանք 1005։ Խաչելության թվականը ևս հավասար է 1005-ի (խաչելության թվականը հաշվելիս, պիտի գումարենք 33)։ Հոռոմեական տրված 757 թվականին պիտի գումարենք 248, հավասար է 1005-ի։ Եվ, վերջապես, տրված հայկական թվականին՝ 453-ին պիտի գումարենք 552, հավասար կլինի 1005-ի։ Հետևապես, Ստեփանոս Ասողիկի պատմությունը, անվիճելի, գրված է 1005 թվին։

Հայկական ՍՍԻ Պետական մատենադարանի սեփականությունը եղող Գրիգոր Նյուսացու «Երգ երգոց»-ի մեկնությունը (№ 2684) գրված է «Ի ՆԻԲ թուականութեանն Հայոց և ՉԻՆ Հոռոմի թուականութեանն...»⁶⁰։ Հայոց ՆԻԲ թվականը հավասար է $422 + 551 = 973$ -ի, իսկ հոռոմեական ՉԻՆ թվականը՝ $725 + 248 = 973$ -ի։ Ուրեմն, ձեռագիրը գրված է 973 թվին։

Ներսէս Շնորհալին իր դավանական բովանդակությամբ բանաստեղծության գրության թվականը հազորդել է հետևյալ քառյակով.

* Շարունակված մեր ամսագրի 1956 թվականի № № I-ից և II-ից։

58. Հայկական ՍՍԻ Պետ. մատեն.-ի ձեռագիր № 2180, Բ. 256ա։

59. Ստեփանոս Տարսեցուց Ասողկան Պատմությունն տիեզերական, ՍՊԲ, 1885 թ., էջ 285։

60. Գաբրիել կաթ. Հովսեփյան, Հիշատակարանը ձեռագրաց, էջ 127։

«Ի թիւ եօթանոց տանց հարիւրոց,
կատարեցաւ բանս հաւատոց,
Ի վեց հարիւր թուական Հայոց,
Յիւնքն հարիւր չորս Հոռոմոց»⁶¹:

Ըստ այսմ, հայկական թվականով 600-ը հավասար է 1152-ի (600+552), իսկ հոռոմեական 904-ը՝ դարձյալ 1152-ի (904+248): Բացի հոռոմեական մեծ թվականից, մեկ մոտ օգտագործվել է հոռոմեական փոքր թվականն էս, որն սկսում է հոռոմեական մեծ թվականից՝ ավելացնելով 532 տարվա մի շրջան, այսինքն՝ հաշվելով 780 թվականից: Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 492 ձեռագիրը, որը բովանդակում է Գոշի Դատաստանագիրքը, գրվել է «Ի թուականութեանս Հայոց Ուր (633) և շրջանին երթալոյ ի բաց ճԱ (101), որ փոքր կոչի, իսկ Հոռոմի՝ Նե...»⁶²: Ձեռագիրը գրված է հայոց թվականի Ուր-ին՝ 633+552=1185 թ., փոքր թվականի ճԱ-ին՝ 101+1084=1185, հոռոմեական փոքր թվականի Նե-ին՝ 405+248+532=1185: Ուրեմն ձեռագրի ընդօրինակության տարին է 1185-ը:

Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի № 314 ձեռագրի ընդօրինակողը գրչության թվականի մասին հետևյալ հիշատակությունն է թողել. «Գրեցաւ գիրքս ի թուականս Հայոց նորումս ԶԹ, իսկ Հոռոմոց ՅՂԳ...»⁶³: Ըստ այսմ, ձեռագիրը գրված է հայոց նոր կամ փոքր թվականի ԶԹ-ին՝ 89+1084=1173, հոռոմեական փոքր թվի ՅՂԳ-ին՝ 393+248+532=1173: Ուրեմն՝ ձեռագիրը գրված է 1173 թվին:

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 1971 ձեռագրին ընդօրինակված է գումարգիր ծածկագրով՝ «Հայոց Ու.ՀԱԳԱ ԱԳԱ և ՈՒՆ ԼԱԼԱ», «որուն հոռոմայեցոց մեծացն ՄԱՌ ՄԵՆ ԽԼԱԹ» և «փոքրն՝ ՄԱ ճԱ ՌԱԹ»⁶⁴: Հայոց թվականը արարականի վերա-

ծած ստացվում է՝ $1000 + 1 + 70 + 1 + 9 + 1 = 1082$ և $600 + 400 + 20 + 30 + 1 + 30 + 1 = 1082$, իսկ $1082 + 551 = 1633$: Հոռոմեական թվականով՝ $50 + 1 + 1000 + 200 + 5 + 50 + 40 + 30 + 1 + 9 = 1386$, իսկ 1386-ին դումարած 247=1633 (հայկական թվականը 551 ընդունելուց հետո գումարում ենք ոչ թե 248, այլ 247): Իսկ փոքր թվականով՝ $200 + 1 + 100 + 1 + 9 + 1 + 10 = 322$ (փոքր սակով այստեղ հասկացվում է ոչ թե մըտրուլը, այլ հայկական կրկնանավասարդի տարին, որ սկսել է 1312-ին, բայց այստեղ հաշվված է 1311-ով՝ մի թվական դարձյալ զեն է նետած)՝ $322 + 1311 = 1633$:

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 5602 ձեռագիրը, որը պարունակում է Օրբելյանների ապստամբության մասին մի արժեքավոր հիշատակարան, գրչության թվականի մասին հետևյալ տեղեկությունն է արձանագրած.

«Արդ եղև շարագծութիւնս այսր տառի մեկնութեան յամի Ուրդի, և եւթան առ քսանի: Թուարերութեան Հայագնեան քրոնիկոնիս, իսկ նորոյս շրջանի իննսնի և չորից և ի Կեանարարին մերոյ ծննդեմէ՝ հազար և հարիւր եւթանասուն և վնն էին ամաց՝ շրջագալութիւնս: Իսկ Հոռոմի մին շրջանի՝ երեքհարիւր իննսուն և ութ էին բովանդակութիւնս ամաց:

Նախ քան դաշս միով ամաւ խաւարեցաւ արեգակնն յապրեղիոս ամաւոյ ի նորում կիրակէին յառաջնումս ժամուս»⁶⁵:

Հիշված ձեռագիրը գրված է տարվա սկզբներին, ուստի և պետք է ավելացնել ոչ թե 552, այլ 551: Այդ հաշվով՝ հայկական Ռիէ թվականը հավասար է 1178-ի ($627 + 551$): Մտրուլ թվականի 94-ը հավասար է 1178-ի ($94 + 1084 = 1178$): Հոռոմեական 498-ը հավասար է 1178-ի ($398 + 248 + 532$):

7. ՀԻՋՐԱՅԻ ԹՎԱԿԱՆԸ

Հիջրայի կամ մուսուլմանական թվականի սկիզբը համարվում է 622 թվականի հուլիսի 16-ը Հուլյան տոմարով, երբ սեղի է ունեցել Մահմեդի փախուստը Մեկկայից զեպի Մեդինա: Արաբական տարին մարտի լուսնական տարի է. նա բաղկացած է 12 ամիսներից՝ հաջորդական 29 և 30 օրերից— լի տարին ունի 354 օր, իսկ նահանջը՝ 355 օր:

61. Ներսէս Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, 1830 թ., էջ 223—224:

62. Գարեգին կաթ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, էջ 505:

63. Զ. Բ. Սարգսյան, Ձեռագրաց ցուցակ Վենետիկի, հատ. Բ, էջ 1268:

Արեգակնային տարին, ինչպես ասել ենք, ունի կըր հաշվով $365\frac{1}{4}$ օր, այսինքն՝ մոտ $11\frac{1}{4}$ օր ավելի լուսնային տարուց, ուստի և մոտ 33 տարվա ընթացքում լուսնական տարին 1 տարի առաջ է ընկնում:

Հիջրայի տարին մեր ներկա թվականի վերածելու համար գոյություն ունի հաշվելու երկու եղանակ— մեկը պարզ՝ թվականը մոտավոր ձևով գտնելու համար, իսկ մյուսը

64. Հայկական ՍՍՌ Պետ. մատեն.-ի ձեռագիր № 5602, Բ. 270ա—բ:

65. Հայկական ՍՍՌ Պետ. մատեն.-ի ձեռագիր № 1971, Բ. 123ա:

բարդ՝ ճիշտ թվականը և օրը գտնելու համար⁶⁶:

Պարզ եղանակը հետևյալն է:— Տրված թվականը բաժանում ենք 33-ի վրա՝ իմանալու թե քանի՝ նահանջ տարի է մուտք գործել տվյալ թվականի մեջ: Ապա ստացած արտադրյալը գուրս ենք անում տվյալ թվականից և մնացածը գումարում Մահմեդի փախստյան 622 թվականի վրա: Այսպես օրինակ՝ հիշյալի 1201 թվականը գտնելու համար անհրաժեշտ է.

- 1) $1201:33=36+1=37$ (մնացորդի դեպքում մեկ տարի ավելացնում ենք).
- 2) $1201-37=1164$.
- 3) $1164+622=1786$:

Հիջրայի բարդ, բայց ավելի ճիշտ թվականը որոշելու համար պիտի վերցնել հիջրայի լուսնական 30 տարիների ցիկլը, որն անփոփոխ կրկնվում է: Յուրաքանչյուր լուսնական ցիկլը ունի 10.631 օր: Այնուհետև պիտի պարզել, թե տրված թվականը քանի՝ լուսնային ցիկլ է պարունակում, ապա ստացած թիվը բազմապատկել լուսնի ցիկլի վրա և ստացած թիվը բաժանել $364\frac{1}{4}$ -ի վրա:

Ճիշտ հաշվումների համար մշակված են հատուկ աղյուսակներ, որոնք մենք բերում ենք հաջորդ էջերում:

Ենթադրենք մեզ տրված է պարզել, թե մեր ներկա թվականով ֆրո է տեղի ունեցել հիջրայի 782 թվի ուսմազան ամսի 19-ին Բաղդադում պատահած երկրաշարժը: Մենք կատարում ենք հետևյալ հաշվումները:— Նախ հաշվում ենք, թե 782 լուսնական տարիները քանի՝ օր են պարունակում.

$$\begin{aligned} 780 \text{ տարի} &= 284 \cdot 638 \text{ օր (Ա աղյուսակով)} \\ \text{երկուրդ տարին} &354 \text{ » (Բ »)} \\ \text{ուսմազանի սկիզբ} &236 \text{ » (Գ »)} \\ \text{ամսի քանիսը} &19 \end{aligned}$$

$$285 \cdot 247 \text{ օր}$$

66. Հիջրայի թվականները մեր ներկա թվական հաշիվների վերածված ամբողջական աղյուսակ է հրատարակել ակադ. Զ. Ա. Օրբելին 1940 թվին՝ «Синхронические таблицы для перевода исторических дат по Хиджре на европейское летоисчисление» Խորագրով:

Այժմ բաժանում ենք աստղաբաշխական տարվա օրերի վրա.

$$\begin{aligned} &285247 \text{ օր} \\ 1300 \text{ տարի} &255675 \text{ » (Դ աղյուսակով)} \\ &29572 \text{ »} \\ 80 \text{ տարին} &29220 \text{ » (Ե աղյուսակով)} \\ &352 \\ &335 \text{ (Զ աղյուսակով)} \\ 1380 \text{ Թ. դեկտ. } &17 \end{aligned}$$

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի «Փղոսկրյա» կոչվող նշանավոր Ավետարանը գրված է Վամի թուոյ Հայկազանց ՆԼԸ, և ըստ թուոյ Հոռոմի ՉԽԲ, յիսմայելական բունկալութեանն 32Թ⁶⁷: Խամայելական թվականն այստեղ հիշված է արաբական հիջրի թվականի իմաստով, որը ներկա թվականի վերածելու համար պիտի կատարել հետևյալ հաշվումները.

- 1) $360 \text{ տարին} = 135804 \text{ օր (Ա աղ.)}$
- 2) $19 \text{ տարին} = 6379 \text{ » (Բ աղ.)}$

$$\begin{aligned} 379 \text{ տարին} &= 142183 \text{ օր, որից հանած} \\ &109575 \text{ օր} = 900 \text{ տարվա (Դ աղ.)} \\ &\text{կմնա՝ } 32608 \end{aligned}$$

$$32142 = 88 \text{ տարվա (Ե աղ.)}$$

$$466$$

$$456 = 1 \text{ տարի 4 ամսի (Զ աղ.)}$$

$$10$$

Այսպիսով՝ $900 + 88 + 1 = 989$ և լրացուցիչ 4 ամիս:

Նվ քանի որ Հռոմեական թվականով ձեռագրի գրության ժամանակը 990 է, նույնը և հայկականով, ապա պիտի ենթադրել, որ ձեռագիրը գրվել է 990 թվականի հուլիսից առաջ⁶⁸:

Հաշվումների գործն ավելի դյուրացնելու համար օգտագործվում են տոմարական հետևյալ վեց աղյուսակները, որոնք մենք վերցրել ենք ղոցնեստ Գ. Մամեդբեկի 1949 թվին հրատարակված «Синхронические таблицы для перехода от лунного летоисчисления к солнечному и обратно» աշխատությունից:

67. Գարեգին կաթ. Հովսեփյան, Հիշատակարանը ձեռագրաց, էջ 155:

68. Լուսնային տարվա մանրամասն հաշվումները տես F. K. Ginzel, «Handbuch der Mathematischen und technischen Chronologie, Leipzig, 1906, p. 362—372.

Ա. ԼՈՒՍՆԱՅԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱՆ ՑԻՒՆԵՐԻ ՕՐԵՐԻ ԹԻՎԸ

(Սկսած 6-րդ դարի վերջից օրից)

30 — 18863	510 — 188959	990 — 359055
60 — 29494	540 — 199590	1020 — 369686
90 — 40125	570 — 210221	1050 — 380317
120 — 50756	600 — 220852	1080 — 390948
150 — 61387	630 — 231483	1110 — 401579
180 — 72018	660 — 242114	1140 — 412210
210 — 82649	690 — 252745	1170 — 422841
240 — 93280	720 — 263376	1200 — 433472
270 — 103911	750 — 274007	1230 — 444103
300 — 114542	780 — 284638	1260 — 454734
330 — 125173	810 — 295269	1290 — 465365
360 — 135804	840 — 305900	1320 — 475996
390 — 146435	870 — 316531	1350 — 486627
420 — 157066	900 — 327162	1380 — 497258
450 — 167697	930 — 337793	1410 — 507889
480 — 178328	960 — 348424	1440 — 518520

Բ. ԼՈՒՍՆԱՅԻՆ ՕՐԵՐԻ ԹԻՎԸ 30 ՑԻՒՆԻ ՅՈՒՐԱԲԱՆՉՅՈՒՐ ՏԱԲՈՒՄ ՍԿԶԲՈՒՄ

1 — 0	8 — 2481	15 — 4961	22 — 7442	29 — 9922
2 — 354	9 — 2835	16 — 5315	23 — 7796	30 — 10277
3 — 709	10 — 3189	17 — 5670	24 — 8150	
4 — 1063	11 — 3544	18 — 6024	25 — 8505	
5 — 1417	12 — 3898	19 — 6379	26 — 8859	
6 — 1772	13 — 4252	20 — 6733	27 — 9214	
7 — 2126	14 — 4607	21 — 7087	28 — 9568	

Գ. ԱՄԻՍՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՕՐԵՐԻ ԹԻՎԸ ՀԱՏ ԼՈՒՍՆԱԿԱՆ ՏՈՄԱՐԻ

I Մոհառում 0	II Սափար 30	III Թարի I 59	IV Թարի II 89	V Ջումադա I 118	VI Ջումադա II 148
VII Թաշար 177	VIII Շաբան 207	IX Թամազան 236	X Շավալ 266	XI Ջուլդադա 295	XII Ջուլիջն 325

Գ. ՕՐԵՐԻ ԹԻՎԸ ԴԱՐԵՐՈՎ

(6-րդ դարից մինչև 22-րդ դարի սկիզբը)

600 — 0	1400 — 292200
700 — 36525	1500 — 328725
800 — 73050	1600 — 365240
900 — 109575	1700 — 401761
1000 — 146100	1800 — 438288
1100 — 182625	1900 — 474812
1200 — 219150	2000 — 511337
1300 — 255675	2100 — 547861

Ե. ՕՐԵՐԻ ԹԻՎԸ ԸՍՏ ՔԱՌԱՄՏԱԿՆԵՐԻ ՍԿԶՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ

4 — 1461	36 — 13149	68 — 24837
8 — 2922	40 — 14610	72 — 26298
12 — 4383	44 — 16071	76 — 27759
16 — 5844	48 — 17532	80 — 29220
20 — 7305	52 — 18993	84 — 30681
24 — 8766	56 — 20454	88 — 32142
28 — 10227	60 — 21915	92 — 33603
32 — 11688	64 — 23376	96 — 35064

Զ. ՕՐԵՐԻ ԹԻՎԸ ԸՍՏ ՅՈՒՐԱՔԱՆՁՅՈՒՐ ԱՄՍՎԱ. ՍԿԶՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ

	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
0	0	31	60	91	121	152	182	213	244	274	305	335
1	366	397	425	456	486	517	547	578	609	639	670	700
2	731	762	790	821	851	882	912	943	974	1004	1035	1065
3	1096	1127	1155	1186	1216	1247	1277	1308	1339	1369	1400	1430

8. ՎՐԱՅ ՔՐՈՆԻԿՈՆԻ ԹՎԱԿԱՆԸ

Հայ ժողովրդի պատմության թարգմանական սկզբնաղբյուրներում մեկ-մեկ պատահում ենք վրաց քրոնիկոնի մեծ և փոքր թվականների գործածության:

ՅՑ. 1582 թվի հոկտեմբերի 15-ից մինչև 1590 թիվը ներառյալ օրերի թիվը պիտի պակասեցվի 10 օրով: Նախնեք դարերի համար (1700, 1800, 1900, 2100) վերջին աղյուսակների օրերը պիտի ավելացնել 1 օրով:

Վրաց քրոնիկոնի մեծ թվականը մեր ներկա թվականին վեր ածելու աշխատանքը բարդ չէ—տրված թվին պիտի ավելացնել 780: Բերենք օրինակներ.

«Քրոնիկոնի 343-ին [Դավիթ] Շինողն Անի քաղաքը խլեց Ալիապուանից և կոտորեց նրանց»⁷⁰: Դեպքը տեղի է ունեցել մեր ներկա թվականի 1123-ին, որովհետև քրոնի-

70. Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Երևան, 1946 թ., էջ 87:

կոնի 343-ին պիտի գումարենք 780 և հաժապար կլինի 1123-ի:

«Գեորգիոն» գրավեց Անին... բրանիկոնի երեք հարյուր ութսունին, ձերբակալեց Մայգուսին⁷¹: Գեպար տեղի է ունեցել մեր ներկա թվականի 1160-ին ($380 + 780 = 1160$):

Վրաց բրանիկոնի փոքր թվականը մեր թվականին վեր ածելու համար տրված թվականին ավելացվում է 1312 (այսինքն՝ նախկին 780-ի վրա ավելացված 618-ի

նոր շրջանը՝ $780 + 532 = 1312$): Բերենք երկու օրինակ.

«Շահ Խամաշիկի արդի շահ Բահմազն իր հորից հետո թագավոր նստեց բրանիկոնի 190-ին⁷²: Բրանիկոնի փոքր թվականով 190-ը հավասար է 1502-ի ($190 + 1312 = 1502$):

«Սուլթան Մուրադ խոնդարի գալը և երևանի բերդի գրավումը տեղի է ունեցել բրանիկոնի 325-ին⁷³: Բրանիկոնի փոքր թվականով 325-ը հավասար է 1637-ի ($325 + 1312 = 1637$):

9. ԸՆԳԻԿՏՈՆԻ ԹՎԱԿԱՆԸ

Ընդիկախոնը 15 տարվա մի շրջան է և հայկական ձևադրերում գլխավորապես գործ է ածվում ծածկագրի հիշատակարաններում: Որպես թվական սկսում է գործ ածվել 313 թվից—առաջին ընդիկախոնը սկսում է 313-ից և վերջանում 327 թվին, իսկ 328-ին սկսում է երկրորդ, և այսպես, հաջորդաբար 15-ական տարով շարունակվում: Ընդիկախոնի տարին սկսում է սեպտեմբերի 24-ից: Ընդիկախոնը որպես թվական գործածվելիս հիշվում է՝ թե բաներորդ ընդիկախոնն է և ընդիկախոնի բաներորդ տարին է:

Հայկական ՍՄԹ Պետական մատենագրա-

րանի № 906 ձևադրեր, որ պարունակում է Ոսկերեքանի ձառերը, ընդօրինակված է «ի» դիկախոնի հասմաց յերեսասաներորդ ամին, ի թագաւորութեանն Մանուխայի կայսեր, իսկ մեր լուսաւորութեանն Ամն հարիւր և քառասուն և Գ, ի կուսածին ծագմանն հազար քառասուն և Ե⁷⁴: Ձևադրեր գրվել է 1045 թվին, իսկ 1045-ին իբր գահակալել է Կոստանդիանոս Մանուխար և այդ թվին, իբր, ընդիկախոնի 13-ն է հանդիսացել⁷⁵: Լուսավորչի թվականն ևս համապատասխանում է այս թվականին, եթե հաշվելու լինենք 300 ($300 + 745 = 1045$):

10. ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ԹՎԱԿԱՆԸ

Ծածկագրություն և գրչախաղերի մեջ, մանավանդ տոմարական տեքստերում և չափածո հիշատակարաններում, հաճախ գործ է ածվում հորելյան թվականը, որ հավասար է 50 տարվա շրջանին:

Ստեփանոս գրիչը Տիգրանակերտում իր ընդօրինակած ձևադրի թվականը հիշում է.

«Գծագրեցաւ զիրս սորս
Ի թվականիս մեր Հայկազնեայ
Քսան և մեկ չորելինեայ,
եւ ութ թիւ յաւել վերայ»⁷⁶:

Հորելյանն ընդունելով 50 տարվա շրջան, Ստեփանոս գրչի ձևադրին ընդօրինակված է լինում 1609 թվականին ($21 \times 50 + 8 + 551 = 1609$):

Թեոդորոս գրիչը Կարինում ընդօրինակած իր ձևադրի թվականը հայտնում է հետևյալ չափածո տողերում.

«Այս հրաշափառ մեծի տառիս,
Քեզ երանի՜ թէ հանդիպիս:
Արդ զիս յիշեալ զմեռեալ հոգիս՝
ԶԹեոդորոս զծոյ տառիս,
Հազար, հարիւր, յորելեանիս,
Տասն և հինգ թիւ ալ ի նոյն յեռիս»⁷⁷:

Ձևադրի գրչության թվականն է 1716 ($1000 + 100 + 50 + 15 + 551 = 1716$):

Հայկական ՍՄԹ Պետական մատենադարանի № 8 ձևադրի թվականը կազմված է ինը հարյուրից, «վեց յորելից» և «քսան թիւ յաւել»-ից⁷⁸: Ձևադրի թվականն է 1771 ($900 + 50 \times 6 + 20 + 551 = 1771$):

Փարիզի Ազգային մատենադարանի հայկական բաժնի № 61 ձևադրեր, որ բովանդակությամբ մաշտոց է, հասպելե Կաֆայեցի:

74. Գարեգին կաթ. Հովսեփյան, Հիշատակարանը ձևադրաց, էջ 211:

75. Ga rdthausen, էջ 41:

76. Հայկական ՍՄԹ Պետ. մատեն.-ի ձև. № 3941, ք. 125ա:

77. Հայկական ՍՄԹ Պետ. մատեն.-ի ձև. № 3152, ք. 157բ:

78. Հայկական ՍՄԹ Պետ. մատեն.-ի ձև. № 8, ք. 136բ:

71. Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց ազգայութեանը Հայաստանի և հայերի մասին, էջ 49:

72. Նույնը, էջ 110:

73. Նույնը, էջ 114:

գրել է «...ի թուականութեանս հայազուն սե-
սի և յարեթական տումարի քսան և երկու յո-
րելինի, և միակ եփն և տասնեկի, ի հայրա-
պետութեան Տառն Յակոբայ սրբազան կա-

թողիկոսի...»⁷⁹։ Ձեռագիրը մեր ներկա թվա-
հաշվով գրված է՝ 22 հորելյան, նրան գու-
մարած 17 և 551 (1100+17+551) համասար
է 1668-ի։

11. ԻՐԱՍԻ, ՆՈՆՈՍԻ, ԲԵՍԻՔԻՍՏՈՆԻ ԵՎ ՈՂԻՄՊԻԱԿԻ ԳՈՐԾԱՇՈՒԹՅՈՒՆ

«Իդոս» բառը գործ է ածվել ութ տարվա
շրջանի համար (տե՛ս Շիրակացու «Տիեզերա-
գիտություն և տոմար», էջ 70)։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարա-
նի № 2381 ձեռագիրը, որ բովանդակությամբ
բերականություն է, ունի Ղուկաս գրչի հետե-
յալ հիշատակարանը.

«Եթէ կամիս ըզթվականն,

Կալ և հաշուեալ զքսան յորելեան,

Երկ եռակի ընդ երկոտասան»⁸⁰։

Բերականությունը գրված է 1631 թվակա-
նին ($20 \times 50 + 2 \times 3 \times 10 + 8 + 12 = 1080 +$
 $551 = 1631$)։

Որ փոքր այստեղ «Իդոս»-ը ութ տարվա
շրջանի համար գործ է ածված և թվականի
վերծանությունը ճիշտ է, այդ կարելի է տես-
նել նույն հիշատակարանի մի այլ հատվա-
ծից. «ի թվիս շրջադաշտութեան Հայկազեան
մեծ տաւմարի հազար և ութսուն զծագրեցաւ
և յանկ ելեալ կատարեցաւ տառս իմաստու-
րեան»։

Պրոֆ. Ն. Աղոնցը իր «Дионисий Фракийский
и арм. его толкователи» աշխատության մեջ
բերել է այս քառյակը և փորձել վերծանել
թվականը, բայց չհասկանալով իդոս բառի
իմաստը, կարծել է, որ դա աղավաղված բա-
ն է, առաջարկելով ուղղել Բ Դ-ան, այսինքն
 2×4 («ի դոսն, по видимому, — գրել է նա, —
неверное чтение вместо Բ Դ-ан, т. е. 2 на
4 = 8»⁸¹։

«Նոնոս»-ը գործ է ածվել հինգ տարվա
շրջանի համար, «Բեսեփիստոն»-ը՝ յոթ տար-
վա և «ողիմպիադ»-ը՝ չորս տարվա շրջանի
համար։

Պրոֆ. Ն. Աղոնցը իր վերև հիշված աշխա-
տության մեջ բերել է ձեռագիր բերականու-
թյան հետևյալ հիշատակարանը.

«Յամի երեսներորդի երկրորդերորդի յո-
րելեանի, միոյ բեսեփիստոնի, մին ողիմպիա-

դի թուարերութեան ժամանակի մարդեղու-
թենէ Փրկչի, նայ և ըստ համարոյ Յարեթագին
տումարի հարիւր երեսուն և երկու իդոսի,
երկրորդին ամի եղև սկիզբն և յաւարտումն
գրի, որ է տումար և քերական...»⁸²։

Չկարողանալով վերծանել հիշյալ թվակա-
նը, պրոֆ. Ն. Աղոնցը հետևյալ ծանոթու-
թյունն է տվել.

«Имеется запись писца Якова с указа-
нием даты, но к сожалению, указание это
так нескладно и непонятно, что вопрос о
дате остается под большим сомнением»⁸³։

Գիտական աննշան ուղղումներից հետո
հիշատակարանի թվականը վերծանվում է.
«երեսներորդի երկրորդի յորելեանի ($32 \times 50 =$
 $= 1600$ թ.) + «մին բեսեփիստոն» (5) + «մին
ողիմպիադ» (4) = քրիստոնեական կամ, ինչ-
պես ասված է՝ «մարդեղություն» 1609 թվա-
կանը։ Այդ նույնը հայկական թվականով
(«ըստ համարոյ Յարեթագին տումարի»)՝
«երեսուն և երկու իդոսի» ($32 \times 8 = 1056$) +
«երկրորդ ամին» (2) + 551 = 1609։

Չափածո գրականության մեջ և կամ տո-
մարական տեքստերում ՇԼԲ (532) տարիների
շրջանը հաճախ գործ է ածվում կրճատ՝
«Ե-եակ» ձևով, երկու դեպքում էլ պիտի
հաշվել 532։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարա-
նի № 3390 ձեռագրի ավարտման թվականը
Ստեփանոս գրիչը հայտնում է հետևյալ ծած-
կագիր քառյակով.

«Թիւ գրգուկիս աւարտեցման,

Չոյզ շրջանիկ եղ յորելեան,

Եւ մակ եռակ քառապատկեան,

Քառիկ դարձեալ և մու քրսան»⁸⁴։

Այս ծածկագիր թվականը վերծանվում է
հետևյալ ձևով. 532×2 (չոյզ շրջանիկ) + 50
(եղ յորելեան) + 3×4 (մակ—վերան) (եռակ
քառապատկեան) + 4 (քառիկ դարձեալ) + 20
(և մու քսան) = $1150 + 551 = 1701$ ։ (Նույնը
տե՛ս Հայկական ՍՍՌ Պետական մատենա-
դարանի ձեռագիր № 2355, թ. 107ր)։

79. Նույն տեղում, էջ XXIV։

80. Նույն տեղում, նույն էջը։

81. Նույն տեղում, նույն էջը։

82. Նույն տեղում, նույն էջը։

83. Նույն տեղում, նույն էջը։

84. Նույն տեղում, նույն էջը։

79. F. Macler, Catalogue des manuscrits armé-
niens et géorgiens, 1908, p. 30.

80. Հայկական ՍՍՌ Պետ. մատեն.-ի ձեռ. № 2331,
թ. 243ա։

81. Н. Адонц, «Дионисий Фракийский и ар-
мянские его толкователи», СПб., 1915,
стр. X.

